Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
մայիսի 21-ի N 806 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՄՆԱԳԻՏԱՑՈՒՄ, ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՉԱՆՑԱԾ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԿԱՄ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՐՆԵՐԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)՝

1) գնահատում է արտակարգ իրավիճակներում կամ արտակարգ իրավիճակով պայմանավորված արտակարգ դրություն հայտարարելու դեպքում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված բնակչության բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացնելու համար անհրաժեշտ մարդկային ներուժի կարիքը.

2) մարդկային ներուժի մոբիլիզացիայի նպատակով իրականացնում է բուժաշխատողների հավաքագրում՝ նախարարության պաշտոնական կայքէջում հրապարակված հայտարարության հիման վրա.

3) հայտարարված պահանջները բավարարող դիմումատուների համար նախատեսում է վերապատրաստման դասընթացներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի N 806-Ն որոշման 2-րդ կետով սահմանված կարգով.

4) վերապատրաստման դասընթացներ անցնելուց հետո թույլատրում է բուժաշխատողների ներգրավումը համապատասխան բժշկական օգնության և սպասարկման իրականացման գործընթացում:

2. Սահմանել, որ, ըստ առաջնահերթության, վերապատրաստման են ենթակա՝

1) համապատասխան մասնագիտացում, որակավորում ունեցող, վերապատրաստում չանցած բժիշկ մասնագետները.

2) համապատասխան մասնագիտացում, որակավորում չունեցող բուժաշխատողները.

3) վարակաբանություն, ներքին հիվանդություններ, թոքաբանություն, ընտանեկան բժշկություն մասնագիտությամբ ավարտական կուրսերի կլինիկական օրդինատորները.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի N 952-Ն որոշմամբ հաստատված առողջապահության բնագավառի բժշկական հիմնական և նեղ մասնագիտություններով ավարտական կուրսերի կլինիկական օրդինատորները:

3. Արտակարգ իրավիճակներում կամ արտակարգ իրավիճակով պայմանավորված արտակարգ դրություն հայտարարելու դեպքում բնակչության բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացնող կազմակերպության կառուցվածքը և հաստիքացուցակը կարող է փոփոխվել՝ մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծավալից ելնելով:

4. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության ղեկավարն իրականացնում է բժշկական օգնության և սպասարկման իրականացման գործընթացում ներգրավված վերապատրաստված համապատասխան մասնագիտացում, որակավորում չունեցող, վերապատրաստում չանցած բուժաշխատողների կամ ավարտական կուրսերի կլինիկական օրդինատորների գործառույթների բաշխում և վերաբաշխում:

5. Բժշկական օգնության և սպասարկման իրականացման գործընթացում ներգրավված բուժաշխատողների ծառայությունների դիմաց վարձատրությունը կազմակերպվում է ժամկետային աշխատանքային պայմանագրերի հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
մայիսի 21-ի N 806 - Ն որոշման

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՄՆԱԳԻՏԱՑՈՒՄ, ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՉԱՆՑԱԾ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԿԱՄ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՐՆԵՐԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ

1. Համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունում արտակարգ իրավիճակով պայմանավորված արտակարգ դրություն հայտարարելու դեպքում պացիենտներին կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու գործընթացում կարող են ընդգրկվել՝

1) համապատասխան մասնագիտացում, որակավորում չունեցող, վերապատրաստում չանցած բժիշկ մասնագետները՝ կարճաժամկետ վերապատրաստման դասընթաց անցնելուց հետո՝ բժիշկ-վարակաբանի կամ բժիշկ-թերապևտի հսկողության տակ.

2) վիրաբուժական մասնագիտություններով բժիշկ-մասնագետներին՝ պացիենտների թոքերի ինվազիվ արհեստական շնչառության կազմակերպման համար՝ կարճաժամկետ վերապատրաստման դասընթաց անցնելուց հետո՝ բժիշկ-անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգի հսկողության տակ.

3) «Բժիշկ» («Բուժական գործ» մասնագիտությամբ) որակավորում ստացած և կլինիկական մասնագիտություններով օրդինատուրայի ավարտական կուրսերի օրդինատորները՝ կարճաժամկետ վերապատրաստման դասընթաց անցնելուց հետո՝ բժիշկ-վարակաբանի կամ բժիշկ-թերապևտի հսկողության տակ.

4) «Անեսթեզիոլոգիա-ռեանիմատոլոգիա» մասնագիտությամբ կլինիկական օրդինատուրայի ավարտական կուրսերի օրդինատորները՝ կարճաժամկետ վերապատրաստման դասընթաց անցնելուց հետո՝ բժիշկ-անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգի հսկողության տակ.

5) Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետի «Ընդհանուր բժշկական գործունեություն զինված ուժերում» մասնագիտությամբ ինտերնատուրան ավարտած, զորացրված և առնվազն 2 տարվա մասնագիտական ստաժ ունեցող բժիշկ մասնագետները՝ բժիշկ-վարակաբանի կամ բժիշկ-թերապևտի հսկողության տակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ